

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Նախապատմություն

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 31 դեկտեմբերի 2013թ. դրությամբ, 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, ինչպես նաև նրանց առնչվող ծանոթագրությունները, պատրաստվել են «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

2. Հաշվետու ընկերությունը

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ (այսուհետև՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում գրանցված ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերի կառավարում իրականացնող առաջին ընկերությունն է: Ընկերության հիմնադրման ամսաթիվն է՝ 2012թ. հոկտեմբերի 18-ը. այն գրանցվել է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից որպես ներդրումային ֆոնդերի կառավարիչ՝ ստանալով թիվ 1 Լիցենզիան: Ընկերության գրանցման հասցեն է՝ Խորենացու 15, 5-րդ գրասենյակ, Երևան, Հայաստանի Հանրապետություն:

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն հանդիսանում է պրն. Տիգրան Կարապետյանի վերջնական վերահսկողության տակ գտնվող «Կապիտալ Ինվեսթմենթս» ֆինանսական հոլդինգային ընկերության դուստր ընկերություն:

Ընկերությունը կառավարում է հետևյալ բաց կամավոր կենսաթոշակային և ներդրումային հիմնադրամները

- ԿԱՄ Պետական Արժեթղթերի Ֆոնդ
- ԿԱՄավոր 1 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ
- ԿԱՄավոր 2 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ

Միջինում՝ 2013թ. Ընկերությունն ունեցել է 6 աշխատակից: (2012թ.՝ 4):

3. Պատրաստման հիմունքները

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն պատրաստված ամբողջական, աուդիտ արված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար ղեկավարությունից պահանջվում է՝ որոշել այն տեղեկատվության ծավալը, որն անհրաժեշտ է արտացոլել ամփոփ ֆինանսական հաշվետվություններում, որպեսզի դրանք բոլոր էական առումներով համապատասխանեն աուդիտ արված ֆինանսական հաշվետվություններին կամ ներկայացնեն դրանց ճշմարտացի ամփոփումը:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ղեկավարության կողմից՝ հիմնվելով հետևյալ չափանիշների վրա՝

- (ա) արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկությունները համապատասխանում են ամբողջական աուդիտ արված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկություններին և
- (բ) արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով պարունակում են այն ողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է ամբողջական ֆինանսական հաշվետվություններում և

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ կենսաթոշակային ֆոնդ
Ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

դրան կից ծանոթագրություններում ներառված տեղեկատվությունը խեղաթյուրված կամ ոչ հստակ ներկայացնելուց խուսափելու համար:

Լինելով ամփոփ և խմբավորված՝ սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն կարող լիակատար պատկերացում ապահովել Ընկերության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի վերաբերյալ: Ամբողջական աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները հասանելի են ըստ պահանջի՝ Ընկերությանը դիմելու միջոցով և նրանց հրապարակային կայքում: